ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից
28.12. 2018 թ., արձ. թիվ ___

Հաստատում եմ
Տնօրեն
_____ Վ. Ուռուտյան
_____ 2018 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2018

1. Նշանակություն և կիրառման ոլորտ.

Սույն ընթացակարգը սահմանում է ՀԱԱՀ-ում միջազգային փոխանակման ծրագրերի շրջանակներում սովորողների (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա՝ ասպիրանտ/հայցորդ) և աշխատակիցների (պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմ) ընտրության մրցույթների կազմակերպման և անցկացման կարգը: Փոխանակումն իրականացվում է փոխանակման ծրագրերով համագործակցող կամ երկկողմանի պայմանագրեր ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհերի) հետ:

2. Փաստաթղթային հենք.

2.1 Էրազմուս+ ուսանողական կանոնադրություն (Erasmus+ Student Charter):

2.2 ՀՀ կառավարության համապատասխան որոշումներ:

2.3 ERASMUS+ հիմնական գործողություն 1 «Միջազգային կրեդիտային շարժունություն» ծրագրի և հիմնական գործողություն 2 ծրագրի ուղեցույց:

2.4 ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր:

2.5 Արտաքին կապերի դեպարտամենտի (այսուհետ՝ ԱԿԴ) կանոնադրություն:

2.6 Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր:

2.7 Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:

3. Մեկնող ուսանողների/աշխատակիցների համար մրցույթ հայտարարելու կարգը.

3.1 Համապատասխան պայմանագրի և փոխանակման ծրագրի առկայության դեպքում ԱԿԴ-ն շարժունության սկզբից առնվազն 2 ամիս առաջ հայտարարում է մրցույթ (հրատապ դեպքերում այդ ժամկետը կարող է փոփոխվել՝ հատկապես անձնակազմի շարժունության դեպքերում):

3.2 Մրցույթ կարող է չհրապարակվել այն դեպքում, եթե վերապատրաստումը վերաբերում է միջազգային շաբաթին մասնակցելուն (5.3):

3.3 Հայտարարությունը պետք է պարունակի.

ա) Փոխանակման ծրագրի և համագործակցող բուհի անվանումը և համապատասխան տեղեկություն (պաշտոնական կայք, համապատասխան հղումներ և այլն):

բ) Առկա տեղերի քանակը, շարժունության տևողությունը, ֆինանսավորման չափը, անհրաժեշտության դեպքում վիզա ստանալու ընթացակարգի վերաբերյալ տեղեկություն:

գ) Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (տես Հավելված 1), որը կախված պահանջներից կարող է փոփոխվել:

դ) Դիմելու վերջնաժամկետը և մասնակցության կարգը (տես կետ 4.4):

ե) Ծրագրի համակարգողի կոնտակտային տվյալները:

3.4 Հայտարարությունը տեղադրվում է ՀԱԱՀ պաշտոնական կայքում, ՀԱԱՀ և Արտաքին կապերի դեպարտամենտի սոցիալական ցանցերի պաշտոնական էջերում,

հնարավորության դեպքում տարածվում է էլեկտրոնային փոստի հասցեների բազայով, ինչպես նաև տեղեկության տարածման այլ միջոցներով:

4. Մրցույթին մասնակցելու կարգը.

4.1 Ուսանողը/աշխատակիցը պետք է ներկայացնի հայտարարությունում նշված պահանջներին համապատասխանող փաստաթղթերի ամբողջական փաթեթը էլեկտրոնային և թղթային տարբերակով մինչև հայտարարված վերջնաժամկետը:

4.2 Անհրաժեշտ փաստաթղթերի հանձնումից հետո և դրանց համապատասխանության դեպքում ծրագրի համակարգողի կողմից բոլոր դիմորդները ստանում են ծանուցում մրցույթի անցկացման ձևի և ժամկետի վերաբերյալ:

4.3 Հարցազրույցով անցկացվող մրցույթների դեպքում դիմորդները պարտավոր են նշանակված օրը ներկայանալ առցանց կամ բանավոր հարցազրույցի/մրցույթի: Չներկայացած դիմորդները դուրս են մնում մրցույթից:

4.4 Մրցույթին կարող են մասնակցել ծրագրին համապատասխանող մասնագիտությունների առաջին կուրսը հաջողությամբ ավարտած ուսանողները, ինչպես նաև այն ուսանողները, որոնց ենթադրյալ մեկնումը արտերկիր չի համընկնում նրանց ուսումնառության վերջին կիսամյակին:

4.5 Բուհի որոշմամբ վերջին կիսամյակում իրականացվող շարժունության կթույլատրվեն միայն այն ուսանողները, որոնք դիմում են կարճաժամկետ ծրագրի և մեկնումը չի խոչընդոտում պետական քննությունների/դիպլոմային աշխատանքների կամ մագիստրոսական աշխատանքի պաշտպանությանը, իսկ առարկաների տարբերությունը թույլ է տալիս շարունակել ուսումը՝ առանց ընդհատման:

5. Մրցույթի անցկացնելու կարգը.

5.1 Գործընկեր և ընդունող բուհերի միջև կնքված համաձայնագրերի և/կամ ձեռք բերված համաձայնության հիման վրա մրցույթը կարող է անցկացվել հետևյալ ձևերով.

ա) ԱԿԴ-ն անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները ներկայացնում է ընդունող բուհում տվյալ ծրագրի համար պատասխանատու ստորաբաժանում և նրանց կողմից անցկացված մրցույթի հիման վրա ստանում ընտրված թեկնածուների *վերջնական արդյունքները:* Այդ դեպքում մրցույթի ձևաչափը որոշում է ընդունող համալսարանը (հարցազրույց Skype-ի միջոցով, ընդունող համալսարանի միջազգային ուսանողների առցանց հայտադիմումի հարթակում լրացված և վերբեռնած փաստաթղթերի ստուգում և այլն):

բ) Անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա ԱԿԴ-ի միջնորդությամբ ՀԱԱՀ-ում ձևավորվում է մրցութային հանձնաժողով, որը կատարում է *նախնական ընտրություն:* Դրա արդյունքներն ուղարկվում է ընդունող բուհում տվյալ ծրագրի պատասխանատու ստորաբաժանում, որը պետք է հաստատի ընտրության արդյունքները:

գ) ԱԿԴ-ի միջնորդությամբ ՀԱԱՀ-ում ձևավորվում է մրցութային հանձնաժողով, որն անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթների և բանավոր հարցազրույցի հիման վրա կատարում է *վերջնական ընտրություն:* Ընտրության արդյունքներն ուղարկվում են

ընդունող համալսարանի պատասխանատու ստորաբաժանում, որն էլ հաստատում է վերջնական արդյունքները:

5.2 Մրցույթների որոշ եղանակների (5.1.գ, որոշ դեպքերում՝ 5.1.բ) համար անհրաժեշտ հանձնաժողովի կազմում ընդգրկվում են.

ա) ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի պետը,

բ) ՀԱԱՀ-ում տվյալ ծրագրի համակարգողը,

գ) օտար լեզվի մասնագետ (լեզվի կենտրոն, ամբիոն),

դ) կախված մրցույթի առանձնահատկություններից՝ ուսումնական կամ գիտական գծով պրոռեկտոր կամ դեկան,

ե) անհրաժեշտության դեպքում կարող են ընդգրկվել նաև բուհի 1-2 այլ ներկայացուցիչներ:

5.3 Միջազգային շաբաթին մասնակցելու թեկնածու/ների ընտրության հարցը քննարկվում է ԱԿԴ-ի նիստի ժամանակ՝ համաձայնացնելով ռեկտորի հետ:

5.4 Շարժունության 1 տեղի համար միայն 1 դիմորդի առկայության դեպքում ընտրության հարցը կարող է քննարկվել ԱԿԴ-ի նիստի ժամանակ:

5.5 Հանձնաժողովի անդամները պետք է.

ա) ստուգեն և գնահատեն ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը,

բ) տան համապատասխան եզրակացություն,

գ) անցկացնեն բանավոր հարցազրույց՝ գնահատելով մասնակցի հմտությունները, լեզվի իմացությունը, մասնակցության շարժառիթը և այլն:

դ) ամփոփեն և ներկայացնեն ընտրության արդյունքները:

5.6 Բանավոր հարցազրույցի անհրաժեշտության բացակայության դեպքում ԱԿԴ-ի միջնորդությամբ կազմված հանձնաժողովը գնահատման թերթիկներով կատարում է մասնակիցների վարկանիշային միավորների բաշխում, որից հետո ամենաբարձր միավորներ ստացած դիմորդը/դիմորդները ներկայացվում են ընդունող համալսարան՝ որպես ծրագրի մասնակից/մասնակիցներ:

5.7 Այլ հավասար պայմանների դեպքում մրցույթում առավելություն է տրվում այն ուսանողին կամ դասախոսին, որը մինչ այդ կամ չի մասնակցել փոխանակման ծրագրերին, կամ մասնակցել է ավելի վաղ:

5.8 Մրցույթին իրավունք ունեն մասնակցելու այն ուսանողները, որոնք տվյալ պահին նմանատիպ այլ փոխանակային ծրագրի կրթաթոշակակիր չեն, բացառությամբ այն դեպքերի, եթե կլինեն թափուր տեղեր:

5.9 Եթե դիմորդը դիմել է մեկից ավելի մրցույթների և ընտրվել դրանցից առաջինով, նա այլևս չի կարող մասնակցել մյուս դիմած մրցույթներին:

5.10 Անկախ գնահատման մյուս գործոնների միավորների քանակից, կարող են երաշխավորվել միայն այն դիմորդները, ովքեր 0-20 միավորանոց համակարգով օտար լեզվից միջինում հավաքել են նվազագույնը 13 միավոր:

6. Մրցույթի արդյունքների հրապարակումը և բողոքարկման կարգը.

6.1 Մրցույթի վերջնական արդյունքները ստանալուց հետո ծրագրի համակարգողը էլեկտրոնային նամակով ծանուցում է բոլոր դիմորդներին՝ նշելով հաղթողների անունները և հետագա գործողությունները:

6.2 Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դիմորդները կարող են բողոքարկել արդյունքները՝ ներկայացնելով համապատասխան գրավոր դիմում Արտաքին կապերի դեպարտամենտի պետին:

6.3 Բողոք-դիմումի առկայության դեպքում ԱԿԴ-ի պետի միջնորդությամբ կազմվում է 3 անձից բաղկացած անկախ հանձնաժողով՝ կազմված ԱԿԴ պետից և 2 այնպիսի անձանցից, ովքեր չեն եղել տվյալ մրցույթի հանձնաժողովի կազմում:

6.4 Կախված մրցույթի անցկացման ձևից, մրցութային հանձնաժողովը գործում է ստորև նշված մեխանիզմներից մեկով.

ա) փաստաթղթերի ուսումնասիրման միջոցով կայացնում է վերջնական որոշում,

բ) մրցույթի ձայնագրության ուսումնասիրման միջոցով կայացնում է վերջնական որոշում,

գ) հանդիպում է միայն բողոք ներկայացնողի հետ և կրկին հարցազրույց անցկացնում:

6.5 Բողոքի առկայության դեպքում հանձնաժողովը 3 օրվա ընթացքում պետք է կազմակերպի 6.4 կետում նշված մեխանիզմներից մեկը:

7. Եռակողմ պայմանագրի կնքում.

Անհրաժեշտության դեպքում մեկնելուց առաջ ուսանողները կնքում են եռակողմ պայմանագիր (համալսարան-ուսանող-ծնող), որի ձևաչափը որոշում է ՀԱԱՀ-ն: Այն կնքվում է ռեկտորի, մեկնող ուսանողի և իր ծնողներից/խնամակալներից մեկի, բուհի հաշվապահի և համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հաստատմամբ:

8. Հաշվետվություն ներկայացնելու կարգը.

Այցի ավարտից հետո շարժունության մասնակիցը պարտավորվում է լրացնել Եվրոպական հանձնաժողովի կողմից ուղարկվող «Մասնակցի հաշվետվությունը», ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտ ներկայացնել սահմանված ձևաչափով գրավոր հաշվետվություն, լրացնել առցանց գնահատման թերթիկը, ինչպես նաև ստացված արդյունքների մասին զեկուցմամբ հանդես գալ ՀԱԱՀ շահակիցների համար:

9. Ժամանող ուսանողների/աշխատակիցների մրցույթի անցկացման կարգը.

9.1 Ժամանող ուսանողների/աշխատակիցների համար մրցույթը կազմակերպվում և անցկացվում է ուղարկող բուհի կողմից՝ համաձայն ներքին կանոնակարգի, որը պետք է հաստատվի ՀԱԱՀ-ի կողմից:

9.2 Համատեղ մրցույթների անցկացման դեպքում առցանց հարցազրույցին մասնակցում են ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտի պետը, ծրագրի համակարգողը, այն ստորաբաժանման ներկայացուցիչը, որտեղ նախատեսվում է անցկացնել ուսուցումը, կամ դասավանդումը/վերապատրաստումը, անհրաժեշտության դեպքում նաև՝ այլ ներկայացուցիչներ:

9.3 ՀԱԱՀ ծրագրի համակարգողը պետք է պատշաճ աջակցություն ցուցաբերի ժամանող ուսանողներին/աշխատակիցներին, կազմակերպի ուսումնառության/այցելության ողջ ընթացքը, ուսանողների համար ապահովի համապատասխան դասընթացների կազմակերպումը, անցկացումը և ուսանողի մասնակցությունը, իսկ ծրագրի ավարտին պետք է տրամադրի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

9.4 Ժամանող ուսանողները/աշխատակիցները ուսումնառության/այցելության ավարտին պետք է լրացնեն Եվրոպական հանձնաժողովի կողմից ուղարկվող «Մասնակցի հաշվետվությունը», ՀԱԱՀ Արտաքին կապերի դեպարտամենտ ներկայացնեն հաշվետվություն և լրացնեն առցանց գնահատման թերթիկը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հավելված 1*

Մրցույթների մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

1. անձնագրի լուսապատճե,
2. ինքնակենսագրություն՝ անգլերենով (CV)՝ պատրաստված Europass ձևաչափով,
3. մոտիվացիոն նամակ՝ անգլերենով,
4. աշխատակիցների դեպքում՝ ապացույց ՀԱԱՀ-ի աշխատակից լինելու վերաբերյալ (տեղեկանք Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնից),
5. ուսանողների դեպքում՝ ապացույց ՀԱԱՀ-ի ուսանող լինելու վերաբերյալ (տեղեկանք դեկանատից),
6. ուսանողների/մագիստրանտների դեպքում՝ ակադեմիական տեղեկագիր անգլերենով:

** Ծանոթություն.*
Փաստաթղթերի ցանկը կարող է փոխվել՝ կախված մրցույթի առանձնահատկություններից և ընդունող համալսարանի պահանջներից: